

ԱՂՕԹՔ՝ ՁԻԹԵՆԵԱՑ ԼԵՐԱՆ ՎՐԱՅ

Խաղաղասովիտ այս երկնքին սակ անհուն,
 Ու բարձունքին վրայ այս սուրբ, երկնադէմ,
 Հաւասարժարժ հետքեր Բու փայլերուն
 Ես անյագուրդ հաւաստով լի՝ կը դիտեմ:

Մինչ ձայնիդ ալ արձագանգներ օլայած,
 Լուռ անցեալէն՝ ալիքներով մեզ կուգան,
 Ու կը լեցնեն երանութեամբ մը անանց
 Մեր սրտերը, սիրոյդ առջեւ բաց խորան:

Խաղաղ երկինք մը կը տեսնեմ ես կապոյտ,
 Ու Բեզ առած իւր ծոցին մէջ լուսածիր,
 Կ'ընդարձակուի՛, կը տարածուի՛ նման սիրոյդ,
 Ու պարփակեց օր մը երկինքն ու երկիր:

Վեհանդորր այս բարձունքէն վեր սըլացող
 Յիշատակիդ ի ծունը, ձայնիդ ջինջ՝ ի լուր,
 Բեզ կ'աղբսեմ, խաղաղութեան Իշխեցո՛ղ,
 Իջիր առ մեզ փաղցրութեան իւր յորդ աղբիւր,

Ու շնորհներուդ բացած մեր վրայ լոյս-թեւեր,
 Վերացուր մեզ ամպերու մէջ, մեր հոգին՝
 Երկրպագու տար խորհուրդիդ անստուեր
 Խորանայարկ կամարներուն երկնքին:

ՀՄԱՅՆԱԿ ԳՐԱՆԵԱՆ

(Զիքենեաց Լեռ, 1 Մայիս 1908)

